

ՅՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆՑ

1642

ԹՈՒԱԿԱՆԻՆ ՏՊԱԳՐԵԱԼՔ

1. ԺԱՄԱԳԻՐԻՔ ԱՏԵՆԻ . (Սաղմոսիւ եւ Յօնացոյցով : Ա . Տպգր .)

(Տպագրեալ ի Ջուղայ , ի Տպարտնի Ամենափրկչի վանուց)

Ժակասը . — Մեր ձեռքը անցած օրինակին մէջ կը պակսէր :

Երչասակաւանը . — «Քառք . . . Որոյ ամէն առատ շնորհիւն յանկ եւեալ կատարեցաւ տպագրութ հոգէնուագ սաղմոսացն Դաւթի , ընդ սմին եւ կարգաւորութիւն հասարակաց աղօթից եկեղեցեց Հայաստանեայց :

Յամի հաղար եւ իննհրորդի եւ միակ թուոյ , յամսեանն , Հայոց տրէի երեք եւ Հոսմայեցոց յունվարի երկոտասան : Յալիսարհիս Պարսից արքայանիստ քաղաքիս ըստ դրոց շօշ կոչեցելոյ , որ այժմ ասպանան արտաձայնի : Ի գիւղաք սղաքիս նոր ջուղայու :

Ընդ հովանեաւ որ ամենափրկչի վանիցս որ է մենաստան կուտակրօնից բանասիրաց :

Ի թագաւորուն Պարսից Շահաֆուոյն եւ ի դիտապետութեան , Հայոց հանուրց սեռի Տն Փիլիպպոսի երկցս երանեալ երջանիկ հայրապետի , եւ ի վերատեսչութեան նահանգիս ընդհանուր Պարսկաստանի հեղահոգի արհի եպիսկոպոսի եւ շնորհազարդ վարդապետի Տն ինչաւորի , որ է բընիկ քաղաքաւ Կեսարացի որոյ ջանիւքն եւ աշխատութեամբն եղեւ տպագրութիւնն այս ի մէջ տոհմիս Հայկազնի' :

Քանզի այս ամէներջանիկ վարդապետս ինչաւոր օր ըստ օրէ աեսանէր զտպագրութիւնս ի մէջ ազգացն լատինացւոց , ցանկայր միշտ որպէս զի լիցի ի մէջ Հայաստանեայց եւս , եւ յարածամ խնդրէր հնար գիւտի արուեստիս այսորիկ :

Եւ իբրեւ ոչ գտաւ ուստէք առ ի լնուլ զփախաք ցանկութեան իւրոյ ապաւինեալ այնու հետեւ ի հոգին սբ որ բախէ զշնորհս իւր առատապէս որք յուսան ի նա սկսաւ աշխատիլ իւրով միաբան ուխտին , մինչ զի ի կատար էհան զտպագրութիւնս եւ սփռեալ տարածեաց զգիրս ի մէջ Հայաստանեայցս , որ եւ ժամագիրքս զայս աշխատասէր կամօք ջանացեալ յաւարտ էհան ձեռամբ իւրով : Որ մաղթեմք վայելողացդ եւ պատահողացդ զի խնդրեալիք ի Քսէ ալ ամա երկարակեաց խաղաղութեաւ կեանք . եւ յետ ասոր կենացս ընդ սրբոց աշխատաջան վար-

դասկետացն դատաւարել ի փառս Այ ամէն : և Այլ եւ խնդրեմ անմեղադիր լինել սակս անյարմարութեան քանզի ամէնեւին ի վարդապետաց ոչ է տեսնալ այլ իւրով հանճարովն ըստ պարզեւելոյն ամայ ի հոգոյն սրբոյ այսքան յայտ ածեալ էր եւ եցոյց վասն օգտի բազմաց : Ընդ սրբոյ երջանիկ հօրս յիշել մազթեմ զմաքրասուն աշակերտեալ մասկուէնս իւր : զՏէր սրմէսն քաջ եւ արի ածարան վարդապետն որ է աղբիւր իմաստութեան : եւ զհեղահոգի Տէր Դաւիթ վարդապետն , ճշնասէր եւ զծերունի Տէր Մկրտիչն , եւ զտէր Բաղդասար վարդապետն , եւ զՅովաննէս վարդապետն որ գնացեալ շրջի յաշխարհին լատինացւոց որպէս զի ուսեալ ի նոցանէ եւ եկեալ ուղղեացէ եւ հաստատեցէ զսա ի մէջ հայաստանեաց , ընդ որս յիշել աղերսեմ : եւ զայս աշակերտեալ սրբամարտ Սարկաւադունսն : զՏէր աւետիսն խոհեմ , զխաչատուրն : զսրմէսն : զգալուստն : զսահակն որք միշտ աշխատին ի վերայ դործառնութեանս : ոմանք սրբագրելով եւ այլք կազմելով : այլ եւ յիշել հայցեմ ի սբ աղօթս ձեր : զմեծ յովանէսն այս քաջագնտի որ եւ վերակացու սբ ուխտիս որպէս հայր հասարակաց խնամէ վամենեանս : նաեւ զծերունի խահարար , զտէր Եսայիկն որ ծեր գոլով սպասաւորութիւն առնէ հղարացն ամենեցունց : որոց Գա լիցի վարձահատուց ըստ վոստակոց իւրեանց : ընդ սոցին յիշել պաղատիմ եւ զիս զսարապեալ հէքս զկրկին մարդով խօթացեալ սրմէսն կարօտաբանի : որ ակար անձամբ սակաւ ինչ աշխատեցայ ի վերս սրբադրութեան սորա հինգ կանոն իւ չափ եւ վերայ տունացուցին զըլխոզին իսկ : Մանօք . — Սոյն Ատենի ժամագիրքէն թերի օրինակ մը կը գտնուի Վենետիկի Միքիմարեանց Մատենադարանին մէջ : Սաղմոսը՝ որ կը թուի թէ առանձինն ալ կազմուած էր , օրինակ մը կը գտնուի Կեսարիոյ Թափուսուն գիւղի եկեղեցւոյն մէջ , ուրկէ օրինակուած է մեր վերեւ յառաջ բերած յիշատակարանը : Վենետիկի գտնուած օրինակին մէջ Տօնացոյցին վերջը կը գտնուի հետեւեալ յիշատակարանն ալ :

Գրիտասջիք տօնասէրք , զի մեծ եւ երանելի հայրապետն Տէր Մովսէս որ նորոգեաց զսուրբ Էջմիածինն , որոյ ըստ արժանոյն գովաւանութիւն առաքինասէր վարուցն եւ աշխատաջան վաստակոցն որ ի վերայ կարգաց եկեղեցւոյն եւ կրօնից հաստատութեան ունէր՝ այլում թողից ասել , եւ կամ բաւական համարեալ մեր զոմանս յառաջագոյն տաացեալսն . . . Սա ինքն վերոյառացեալ սուրբ հայրն մեր տահմանեաց տառն շարական ասել օրհնութիւն , վասն բազում խորհրդոց տասնեակ թուոյն . . . վկայ ամելով զմեծ փիլիսոփայն եւ զճառատարիմ քահանայապետն զսուրբն Ստեփաննոս , որ զաւագ օրհնութիւններն տառն տասն շարական արար , ոչ աւելի եւ ոչ նուազ . . . նմանապէս եւ սրբազան հայրս կանոնեաց տառն շարական ասել օրհն

նութեանն ի փառս Քրիստոսի եւ սրբոց նորաւ Եթէ հաճեսցեն կամք եղբայրութեան ձերոյ, քեանն գոհութիւն, եւ եթէ ոչ ախորժեցէ՛ կամք ձեր եզրիցին, իսկ զմեզ ի մեղադրանաց եւ ի բամբասանաց ազատ թողուլ աղաչեմք: Աւարտ էառ ժամագիրքս բոլորովին ի թուին հայոց ՌՂ եւ Ա. յապրիլ ամսոյ ԻԱ. շնորհօք Քրիստոսի Աստուծոյ մերոյ տեսան ամենակալի, որ է օրհնեալ յաւիտեանս, ամէն: Խնդրեմք ի ձէնջ որք պատահիցէ՛ք այսմ տպագրութեան յիշեալիք ի սուրբ յաղօթս ձեր զաշխատասիրողսն այսմ տպագրութեան, զտէր Յակոբն, զՄարգարէն, զԲաղդասարն, զԱրգիշտի եւ զԱղարիայն, ընդ սոսին եւ զնուաստ Սիւմէօնս որ սակաւ ինչ աշխատեցայ ի վերայ սրբագրութեանս:

2. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ. — (Գ. Տպգր.)

Ծանօթ. — Տպագրեալ ի Զուղայ միեւնոյն Ամենափրկչի վանուց տպարանին մէջ: Թէեւ մենք տեսած չենք, բայց Վենետիկի Մխիթարեանց Մատենադարանին մէջ կը գտնուի եղբր երկու էջ պատտիկ մը, որուն տառերու ձևերուն նայելով, հաւանականաբար կ'ենթադրեն թէ տպագրութիւնն եղած ըլլայ ի Զուղայ:

3. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ. (Հայ-Լատ. Ա. Տպգր.)

(Տպագրեալ ի Հռովմ. ի Տպարանի Ուրբանեան)

Խորագիրը. — Կարգեալ սուրբ խորհուրդ պատարագի հայոց.

Ordo divinae Missae Armenorum, Romae typis et expensis Sacrae Congregationis Prop. Fidei, 1642. Superiorum, permissu.

Վկայագիրք. — «Հայոց պատարագի խորհուրդս այս լաթին լեզուով գրեալ՝ ինձ յանձնեցին սուրբ ժողովն գարտինալաց, Վասն օգտութեան հայոց ազգին. եւ ես Վիցենցիուս մականուամբ Ռեքարտուս նորին սուրբ ժողովոյն աստուածաբան վարդապետն ։»

«Ես Յոհաննէս Մուրինի թարգմանիչ հայոց. զգիրքս զայս հայի եւ լաթինի լեզուով գրեալ՝ տեսի եւ կարդացի, եւ վկայեմ վասն ճշմարտութեան, զի ամենեւին հաւասարին միմեանց, բարի եւ ստոյգ ։»

4. ԴԱԻԱՆՈՒԹԻԻՆ... ՀԱԻԱՏՈԹ... (Ա. Տպգր.)

(Տպագրեալ ի Հռովմ. ի Տպարանի Ուրբանեան)

Խորագիրը. — Professio orthodoxae fidei ab orientalibus facienda, jussu S. D. N. Urbani Papa VIII edita, Romae, typis et impensis S. C. de Prop. Fide, 1642, Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղղափառ հաւատոյ՝ վասն առնելոյ եկեղոցն յարեւելից ։»

5. ՍԱՆՎԻՐՈՍ . — (Դ. Տպգր.)

(Տպագրեալ ի Վենետիկ , ի Տպարանի Սալիգաթայի)

Ճակատը . — Սաղմոս ի Դաւիթ , կազմեցաւ ի մայրաքաղաքն Վանատիկ , աւգնականութեամբ պատուական բժշկապետին Յովսէփոս Առօմատարիոսին եւ Անգեղոս Պելիսեղոս արթնացւոյն , թվին հայոց մեծաց ՌՂԱ .»

Թիշասակարանը . — «Պայծառ ընթերցողաց ողջոյն եւ ծանուցում . . . Կատարեցաւ տպագրական Սուրբ երգարանս . . . զոր եւ ես նուազոյցի Յոհաննէս Անկիւրացի տեսանէի զպակասութիւն գրեանց ազգին հայոց եւ վարանէի ի մտի , եթէ զինչ լինի հնար բազմանալոյ հին եւ նոր կտակարանաց . քանզի պատճառ նուազութեան այս էր վիբազում ծախիւք եւ գծուարութեամբ հազիւ կարէ ոք ստանալ Ս . գիրք կամ Բ . եւ կամ երիս . Թող թէ պիտոյանայ բազում . . . եղաք ի մտի իմոյ զարուեստ տպագրութեան օգնականութեամբ Հոգւոյն սրբոյ . . . զիմեցոյ յուսով եւ փափաքանօք ի Հոսմ քաղաք , եւ անդ Դ ամ բազում աշխատութեամբ եւ բազում նեղութեամբ , եւ բազում չարարանաւք , զոր չէ հնար ի գիր արկանել զոր ծածկագէտ ստեղծաւղն իմ գիտէ : Եւ հանի զպողպատն եւ զկաղապարքն , զծաղիկքն եւ զծաղկապերն բազում աշխատութեամբ : Եւ յետոյ եկեալ հասա ի Վենետիկ սկսայ ի գործ արկանել : Զոր եւ նկարեցաւ տպագրական երգարանս զաւթի ի թվականիս հայոց ՌՂԱ , ի ժամանակիս իշխանաց իշխանի պայծառագոյն Փրանկիսկոս էրեցո զուհին , մեծաւորաց հրամանաւ եւ բրիվիլէնով , ձեռամբ իմոյ նուազօրէն Անկիւրացի Թարգմանիչ Յովաննէսին որ ձիւաննի Մօլինօ կոչի , ի լաւ եւ յընտիր աւրինակէ Դառնեցոյ , եւ յայլ ընտիր վարդապետաց ստուգած եւ վկայեամ օրինակէ , քննութեամբ եւ վերականգու եւ հասու լեալ տպագրեցաւ զսուրբ գիրքս առ ի պայծառութիւն մանկանց եկեղեցո ազգիս հայոց :

Դարձեալ աղայեմք զձեզ որ հանդիպիք սմա կարդալով կամ աւրինակելով , յիշեցէք ի մաքրափայլ ազօթս ձեր զնուաստ Անկիւրացի Յոհաննէս , որ պատճառ եղէ թէ գրիս եւ թէ տպագրելոյն , եւ զպատուական այրն Յովսէփոս Արօմատարիօն որ օսկով եւ արծաթով օգնեաց ինձ : Եւ զծնաւղն իմ , զփոխեալն ի Գա . զՄ . արատ ստրկաւագն , եւ ըզմայրն իմ զՓաշա Մէլիքն եւ զերկուս որդիսն իմ զՄիքայէլն եւ ըզԴարբիլէլն , եւ զայլն ամենայն արեան մարձաւորս իմ , եւ զուք ընկալլիք զնոյն :

Դարձեալ ծանիք զի ամենայն ինչ սորա ընտրութեամբ ժողովեցի , եթէ ձեւ գրերուին , եթէ զչար օտոգրուին , եթէ զթանաքն , եթէ զթուիւթն , թէ զկանոնքն եւ եթէ զծաղկապերն եթէ զպատկերքն եւ եթէ զկապն , մանաւանդ զյաւրինակն , որ բազում քննութեամբ եւ բա-

զում աշխատութեամբ ի յայս չափս հասուց աշաւթիւք ձերովք , եւ
գութ որպէս վայել է ձեր արբուծեանդ այնպէս ընդունիք :

« Եւ այլ յիշեցէք զաղայ հասակ մանուկն զՅովսեփոսն , որ աւղնու-
թիւն արար ինձ ի շարեւն գրին , եւ է՝ երկոտասան ամեա՝ մանուկ,
զոր տէր Աստուած զինքն անփորձ պահէ ի վերա երկրի , ամէն :

Դարձեալ աղաչեմ յիշել զճարանտացի մահտեսի Աստուածատուրն ,
որ բազում օգնութիւն արար ինձ ի սրբագրելն եւ յստուգաբանելն , զոր
տէր Ած տացէ զփոխարէնն աստ եւ ի հանդերձեալն , ամէն : Ի տպա-
գրատունն Սալիգաթաու , վերջ » :

Ծանօթ . — Կըլսենք թէ Անկիւրացիի այս սաղմոսէն մէյ մէկ օրի-
նակ կը գտնուին , ի Մատենադարանի Մխիթարեանց Վենետիկոյ
եւ Վիեննայի :

6. ՔՆՆՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ . — (Ա Տպգր .)

(Տպագրեալ ի Վենետիկ . ի տպարանի Սալազաթայի :)

Ծանօթ . — (Տես Մատենադիտութիւն , տիպ Վենետիկ 1883, ուր երես
7½ կ'ըսուի .) « Վեց տպագրութեան թերթերով ձեւացած տետրակ
մը , առանց ճակատի եւ թուականի , որով եւ հրատարակութեան
քաղաքն ալ անյայտ : Հաւանականաբար Վենետիկոյ հին տպագրու-
թիւն մըն է , եւ գրերն ալ միջակ , ըստ դաղափաբաց Յովհաննու
Անկիւրացուոյն : »

ԿԱՊԵՏ

ՈՍԼ ԲԱՂՅԱՆՔ

Ո՞հ ես կուզեմ ոգի մ'ըլլալ ,
Ալիքներու մէջ սուղուիլ ,
Ազատ թռչնոյ թեւ ունենալ ,
Դէ՛պի անհո՛ւն սաւառնիլ :

Ես կը բաղձամ ալիք մ'ըլլալ ,
Ժայռերու գէմ մարտնչել ,
Գերբջնական ոյժ մը ըլլալ ,
Կեանքի խորհուրդը պարզել :

Գտնել բոյնը հսկայ վշտին ,
Ճանջող որդը մարդկութեան ,
Ու կատաղի թափով մ'ուժգրին ,
Ոչնչացնել յաւիտեա՛ն . . .

Բարիչ

Օր . Զ . ԱԼԵԱՆԱՎ